

ԳՐԱԲԱՐԻ ԿՐԿՆԱՍԵՌ ԲԱՅԵՐԸ

Ամեն մի քերականական կարգ այդպիսին է համարվում հակադրամիասնություն կազմող իր ձևախմբաստային եզրերի առկայության դեպքում: Ընդ որում քերականական իմաստի արտահայտման միջոց կարող է ծառայել նաև Չ տարրերակը:

Գրաբարում սեռի քերականական կարգն ունի երեք դրսևորում, սակայն գրաբարյան բային հատուկ է խոնարհման ընդամենը երկու ձև, որոնք մեզանում հայտնի են **ներգործածն** և **կրավորածն**: Սեր կարծիքով, խիստ պայմանական, ավելին չփոք առաջ բերող տերմիններով, քանի որ խոնարհման նշված երկու ձևերը բոլոր դեպքերում չեն ծառայում որպես քերականական իմաստի արտահայտության միջոց: Նշանակում է՝ գրաբարում միշտ չէ, որ առկա է բայի խոնարհման ձևի ու սեռի քերականական իմաստի համապատասխանություն: Այնպես որ գրաբարում ներգործածն խոնարհմամբ կարելի է արտահայտել ոչ միայն ներգործական, այլև չեզոք սեռի քերականական իմաստ, իսկ կրավորածն խոնարհմամբ՝ ոչ միայն կրավորական, այլև չեզոք, երբեմն նաև ներգործական սեռի քերականական իմաստ: Հատկանշական է, որ դա կարելի է անել և՛ սեռի քերականական իմաստով տարրեր բայերով, և նույնիսկ միևնույն բայի սեռի քերականական իմաստի տարրեր դրսևորումներով: Հմնտ. «Եւ ահա **սկսաւ** սատակումն ի ժողովրդեանն» (հմնտ. Թիւ., ԺՀ 47-ում **սկսեալ էր**): «**Սկսան** ի ձեզ զգործս բարեաց» (Փիլիպ., Ա 6): «Ամենայն գործ **սկսաւ** ի ձեռք», համապատասխանաբար, չեզոք, ներգործական և կրավորական կառույցները ձևավորված միևնույն **սկսաւ** բայածնով:

Վերջին տիպի բայածները գրաբարի քերականների կողմից անվանվում են **հասարակ** տերմինով: Այդ բայերն արդի հայերենում նպատակահարմար է վերանվանել **կրկնասեռ**, քանի որ քերականական միևնույն ձևերի սահմաններում հանդես են բերում կրկնասեռություն:

Գրաբարի կրկնասեռ բայերն առ այսօր առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել: Գրաբարագետներն այս հարցին անդրադարձել են, այսպես կոչված, հասարակ (deponent) բայերի առումով՝ քննության առնելով այն բայերը միայն, որոնք դիմաբային բոլոր ձևերում ներգործական և կրավորական սեռերի քերականական իմաստներն արտահայտում են ընդհանուր (այստեղից էլ **հասարակ** տերմինը) բառահարաբերական ծառայությունների միջոցով: Անշուշտ, թե գրաբարում, թե արդի հայերենում կան կրկնասեռության տարրեր դրսևորումներ: Սեր այս աշխատանքով նպատակ է հետապնդվում ուսումնասիրելու գրաբարի բայի կրկնասեռության դրսևորումներից մեկը, երբ քերակա-

նական միևնույն միջոցները ներունակ են արտահայտելու թե ներգործականության և թե՝ կրավորականության իմաստները:

Գրաբարի թե պարզ և թե ածանցավոր բայերը ներկայացնում են քերականական տարբեր սեռեր: Թեև նշվում է, որ գրաբարի բայի սեռի համար «առանձին ձևական ցուցիչ չկա», սակայն լեզվական փաստերը վկայում են, որ գրաբարում բայի կազմությանը մասնակցող ձևայիններից սեռի քերականական կարգի ցուցիչի դեր են կատարում **-ուցան-** պատճառական ածանցը, որով ձևավորվում են բացառապես ներգործական բայեր (**հասուցանել, նստեցուցանել, գրեսցուցանել** և այլն) և **-ի-** **-նչ-** սոսկածանցները, որոնցով ձևավորվում են չեզոք սեռի բայեր (**թռչիմ, փախչիմ, երկնչիմ** և այլն):

Ինչ վերաբերում է **-ն-**, **-ան-**, **-են-** սոսկածանցներին և **-ատ-**, **-ոտ-**, **-տ-** բազմապատկական ածանցներին, ապա սրանցով կարող են ձևավորվել թե ներգործական, թե չեզոք բայեր (իմաստ. օրինակ, **առնուլ** և **գրունուլ, լուցանել** և **իջանել, կամենալ** և **մերժենալ**, համապատասխանաբար ներգործական և չեզոք բայաձևերը):

Նկատելի է, որ գրաբարը չունի կրավորական սեռի բայածանց, և որ կրավորական սեռի ցուցիչը բացակայում է նաև պարզ բայերի կազմության մեջ (կարծիք կա, որ հայերենի **ե** խոնարհիչ ծայնավորն, օրինակ, ներգործականության իմաստի արտահայտման միջոց է եղել, **ա** խոնարհիչ ծայնավորը չեզոքության և այլն)¹: Այդ է պատճառը, որ գրաբարում կրավորական սեռի առանձին բայեր չկան: Դրա փոխարեն կրավորական սեռի գաղափարը գրաբարում արտահայտվում է ժամանակակից հայերենի համար անսովոր միջոցներով:

1. **ե** (որոշ դեպքերում **ե+յ = է**) խոնարհիչ ծայնավորը **ի**-ով փոխարինելով, ինչպես **յիչեմ-յիչիմ, մի՛ գրեր-մի՛ գրիր, գողանայեմ-գողանայցիմ, պատմիցե-պատմիցի** և այլն:

2. Ներգործական իմաստ ապահովող դիմաբվային վերաբավորությունները փոխարինելով կրավորական իմաստ հաղորդող ձևայիններով, ինչպես **կուչիլ - կուչիլ, յիչեցից - յիչեցայց, պատմեաց - պատմեցալ, գրեցիք՝ գրեցայք/գրեցարուք** և այլն, որոնցից առաջինները ներգործական, իսկ երկրորդները կրավորական իմաստ են արտահայտում²:

Ասվածն, անշուշտ, վերաբերում է միայն գրաբարի ներգործական սեռի բայերին: Չեզոք սեռի բայերի համար քավական է խոնարհման ընդամենը մեկ ձև, մինչդեռ կրավորական սեռի առանձին բայերի քաղակալության պայմաններում ներգործական սեռի բայերը կարիք ունեն խոնարհվելու նաև երկրորդ ձևով, որպեսզի վերջինիս միջոցով հարկ եղած դեպքում հնարավոր լինի արտահայտել նաև կրավորական սեռի քերականական իմաստ:

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ կրավորական սեռի քերականա-

կան իմաստի արտահայտության միջոցները զրաբարում այնքան են անմիօրինակ, որ ներգործական սեռի և ոչ մի բայ չունի ներգործական և կրավորական իմաստների արտահայտման՝ միմյանցից տարբեր և որոշակիորեն համակարգված միջոցներ: Ավելին ներգործական սեռի մի խումբ բայեր, իսկ մնացած բայերի էլ առանձին ժամանակաձևեր ու դիմաթվային ձևեր չունեն կրավորական տարբերակի արտահայտման առանձին միջոցներ, ուստի և քերականական միևնույն ձևերով արտահայտում են մի դեպքում ներգործական, մյուս դեպքում կրավորական սեռի քերականական իմաստ²: Այլ կերպ ասած՝ զրաբարում միշտ չէ, որ սեռի քերականական կարգն ունի արտահայտության ուրույն միջոցներ:

Կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտելու տեսանկյունից զրաբարի ներգործական սեռի բայերը բաժանվում են երկու խմբի:

1. Կան ներգործական սեռի մի շարք բայեր, այլև որոշ բայերի էլ առանձին ձևեր, որոնք կրավորական իմաստ արտահայտելու համար խոնարհման համակարգում կրում են ձևաբանական փոփոխություններ: Դմմտ. *պատմեն, պատմեաց* և *պատմիմ, պատմեցաւ* բայաձևերը, որոնցից առաջին զույգը ներգործական, իսկ երկրորդը կրավորական բայաձևեր են:

2. Ներգործական սեռի բայերի երկրորդ խումբը կրավորական իմաստն արտահայտում է առանց ձևաբանական փոփոխություն կրելու, այսինքն՝ հանդես է քերում կրկնասեռություն: Օրինակ *ուսաւ* բայաձևը կարող է արտահայտել և ներգործական, և կրավորական իմաստներ: Դմմտ. *Արշակ ուսաւ* («ղաստիարակեց») *զՊապ և Պապ ուսաւ* («ղաստիարակեց») *յԱրշակաբ*:

Երևույթի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ կրկնասեռությունը զրաբարում լրիվ է կամ մասնակի: *Լրիվ կրկնասեռ* են այն բայերը, որոնք կրկնասեռություն են ցուցաբերում խոնարհման հարացույցի բոլոր ձևերում: *Մասնակի կրկնասեռ* են այն բայերը, որոնք կրկնասեռություն են դրսևորում խոնարհման հարացույցի ոչ բոլոր ձևերում:

Լրիվ և մասնակի կրկնասեռության հարցում էական դեր ունեն ներգործական բայերի կազմությունը (մասնավորապես պարզ կամ ածանցավոր լինելը և *ե, ա, ու* կամ *ի* խոնարհման պատկանելը) և դրանով պայմանավորված՝ խոնարհման առածնախառնությունը, մասնավորապես այն ներգործական սեռի այս կամ այն բայը խոնարհման քանի ձև ունի (մե³կ, թե⁴ երկու) և որ ձև(եր)ով է խոնարհվում միայն կրավորաձև, միայն ներգործաձև, թե և՛ կրավորաձև, և ներգործաձև: Այսպես *ա* խոնարհման ներգործական սեռի պարզ բայերը 2-րդ հիմքից կազմված անցյալ կատարյալ, բուն հրամայական և մասամբ երկրորդ ապառնի ժամանակաձևերում կրկնասեռ չեն, քանի որ խոնարհվում են ներգործաձև, հարկ եղած դեպքում նաև՝ կրավորաձև: Դմմտ. *աղաց-աղացաւ* («աղաց»-«աղացվեց»), *աղացից-աղացայց*, («(կ/պիտի/ի) աղան»-«(կ/պիտի/ի)

աղացվեմ»), *աղա-աղացի՛ր* («աղա»-«աղացվի՛ր»)։ Մինչդեռ *ա* խոնարհման ներգործական սեռի ածանցավոր բայերը, նշված ժամանակաձևերում խոնարհման մեկ ձև ունենալով, համոզես են բերում կրկնասեռություն։ Օրինակ *գողացայ* բայածևը ներուճակ է արտահայտելու թե «գողացա», թե «գողացվեցի» նշանակություններ։

1. Լրիվ կրկնասեռ բայերի թիվը գրաբարում հասնում է հարյուրի։ Դրանք գործառական և այլ տեսանկյուններից կազմում են տարբեր խմբեր։

1.1. Կան կրկնասեռ բայեր, որոնք կազմում են գրաբարի ակտիվ բառապաշարի անքակտելի մասը, ինչպես *ազանհիմ, խորհիմ, խօսիմ, ծնանիմ, կամիմ, կեղծաւորիմ, համարիմ, հաշուիմ, շահիմ, ունիմ (ընդունիմ)՝, ուսանիմ, պարտիմ, սկսանիմ, տանիմ*։ Այս բայերն աչքի են ընկնում ակտիվ գործառությամբ՝ տեղ գտնելով ոչ միայն, այսպես կոչված, դասական շրջանի բնագրերում ու թարգմանական գրականության մեջ, այլև հետագա շրջանի գործերում։

1.2. Մի շարք կրկնասեռ բայեր ակնհայտ հունաբանություններ են, ինչպես *բաղախոհիմ, ըստիմանիմ, կանխախօսիմ, մակընդունիմ, ներընդունիմ, պարագօտիմ, վերախօսիմ, վերընդունիմ, տրամախոհիմ*։ Այս շարքի բայերն աչքի են ընկնում հազվադեպ կիրառությամբ՝ հանդիպելով թարգմանական գրականության մեջ և հայ հեղինակների փիլիսոփայական, աստվածաբանական, քերականական երկերում։

1.3. Որոշ կրկնասեռ բայեր էլ զուգահեռաբար խոնարհվում են նաև ներգործած, ինչպես՝ *չեզուանիմ, խոհիմ, յօսնում, վարկանիմ, վիժացրտնիմ, ցնկնիմ* և այլն։ Այս ենթախմբի բայերի թիվը հասնում է 60-ի։ Հետաքրքիր է, որ 5-րդ դարի բնագրերում նման բայերի կրկնասեռ գործածությունը հազվադեպ է։ Կարծում ենք, որ սրանց կրկնասեռությունը համաբանության արդյունք է, որը տեղի է ունեցել հետագա դարերում։

Նշված երեք ենթախմբերի բայերի դիտարկումից պարզվում է, որ լրիվ կրկնասեռ են ներգործական սեռի քերականական իմաստով օժտված *ի* խոնարհման պարզ ու ածանցավոր և *ու* խոնարհման ածանցավոր բայերը։ Բանն այն է, որ գրաբարում նշված բայերի խոնարհումը, անկախ սեռից ու կազմությունից, բոլոր ժամանակաձևերում կատարվում է միայն կրավորաձև¹⁰։ Հենց այդ է պատճառը, որ լինելով ներգործական սեռի՝ նշված երեք ենթախմբերի բայերը պարտադրված են միևնույն դիմավոր ձևերի միջոցով արտահայտելու և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ։ Օրինակ՝ *խօսի, խօսեր, խօսիցի, խօսեցայ, խօսեցի, խօսեաց* բայածևերը նշանակում են, համապատասխանաբար, «խոսում է»-«խոսվում է», «խոսում էր»-«խոսվում էր», «(կ/պիտի) խոսի»-«(կ/պիտի) խոսվի», «խոսեց»-«խոսվեց», «(կ/պիտի) խոսի»-«(կ/պիտի)պետք է խոսվի», «խոսիր»-«խոսվիր» և այլն։

2. Չրաբարի ներգործական սեռի մյուս բոլոր բայերը (**ե, ու, ա** խոնարհման պարզ և **ե, ա** խոնարհման ածանցավոր) կրկնասեռություն են ցուցաբերում մասնակի դեպքերում (մեկ կամ մի քանի ժամանակաձևերում կամ էլ որոշ ժամանակաձևերի առանձին դիմաբային ձևերում): Այս կամ այն բայի մասնակի կրկնասեռությունը կարող է պայմանավորված լինել մի դեպքում տվյալ բայի խոնարհման պատկանելությամբ կամ կազմությամբ, մյուս դեպքում՝ այս կամ այն ժամանակաձևի կազմության առանձնահատկությամբ: Այդ բայերը (անկախ խոնարհիչ ձայնավորից ու կազմությունից) մասնակի կրկնասեռություն են ցուցաբերում¹¹.

2.1. Անկատար ներկա և նրանից սերված արգելական հրամայական ժամանակաձևերում¹², որտեղ, օրինակ, **թողում** անկատար ներկան նշանակում է «թողնում եմ»-«թողնվում եմ», իսկ, օրինակ, **մի՛ թողուր** հրամայականը՝ «մի թող»-«մի թողնվիր»: Բացառություն են **ե** խոնարհման պարզ և ածանցավոր բայերը, որոնք նշված ժամանակաձևերում ունեն ներգործական և կրավորական իմաստների արտահայտման առանձին միջոցներ:

2.2. Անկատար անցյալում¹³, որտեղ, օրինակ, **թողուի, թողուիր, թողոյր, թողուաք, թողուիք, թողուին** բայաձևերը կարող են նշանակել, համապատասխանաբար, «թողնում էի»-«թողնվում էի», «թողնում էիր»-«թողնվում էիր», «թողնում էր»-«թողնվում էր», «թողնում էինք»-«թողնվում էինք», «թողնում էիք»-«թողնվում էիք», «թողնում էին»-«թողնվում էին»:

2.3. Առաջին ապառնիում, որտեղ, օրինակ, **թողուցում** նշանակում է «(կ/պիտի/պետք է) թողնեմ»-«(կ/պիտի/պետք է) թողնվեմ»: Բացառություն են **ե** և **ա** խոնարհման պարզ և ածանցավոր բայերը, որոնք նշված ժամանակաձևերում ունեն ներգործական և կրավորական իմաստների արտահայտման առանձին միջոցներ:

2.4. **Ա** խոնարհման ածանցավոր բայերը՝ բուն հրամայականում: Այսպես **գողացիր**-ը նշանակում է «գողացիր»-«գողացվիր»: Մասնակի կրկնասեռական մյուս բոլոր բայերը (**ե, ու, ա** խոնարհման պարզ և **ե** խոնարհման ածանցավոր) նշված ժամանակաձևում ունեն ներգործական և կրավորական սեռի իմաստների արտահայտման առանձին միջոցներ:

2.5. Հորդորական հրամայականում, որտեղ, օրինակ, **գրեսցիր, գրեսցիք** ժամանակաձևերը նշանակում են, համապատասխանաբար, «գրիր»-«գրվիր», «գրեցեք»-«գրվեցեք»:

2.6. Անցյալ և ապառնի դերբայներով (դրանցից անցյալը հանդես է բերում և անկախ, և ձևակազմիչ, իսկ ապառնին միայն ձևակազմիչ դերբայի հատկություն¹⁴) և **եմ** բայի դիմավոր ձևերով (**եմ, էի, իցեմ**) կազմված վերլուծական ժամանակաձևերում, որտեղ, օրինակ, **լիչեալ եմ, լիչեցու էի և լիչեցու իցեմ** ժամանակաձևերը նշանակում են, համապատասխանաբար, «լիչել եմ»/«լիչալ եմ»-«լիչվել եմ»/«լիչված եմ», «լիչելու էի»-«լիչվելու էի», «լիչելու լիցեմ»-«լիչվելու (կ/պիտի/) լիցեմ»¹⁵:

2.7. Անցյալ կատարյալի հոգնակի թվի 1-ին դեմքի ձևում, որտեղ, օրինակ, **գրեցաք** բայածը նշանակում է «գրեցինք»-«գրվեցինք», **լցաք**-ը «լցրինք»-«լցվեցինք»: Մասնակի կրկնասեռ բայերից առանձնանում են **ա** խոնարհման ածանցավոր ներգործական բայերը, որոնք կրկնասեռ են նաև նշված ժամանակաձևի մյուս բոլոր դիմաթվային ձևերում¹⁰: Օրինակ **գողացայ, գողացար, գողացաւ, գողացաք, գողացայք, գողացան** բայածները նշանակում են, համապատասխանաբար, «գողացա»-«գողացվեցի», «գողացար»-«գողացվեցիր», «գողացաւ»-«գողացվեց», «գողացանք»-«գողացվեցինք», «գողացայք»-«գողացվեցիք», «գողացանք»-«գողացվեցին»:

2.8. Երկրորդ ապառնիի հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքի ձևերում, որտեղ, օրինակ, **մոռացուք**-ը նշանակում է «(կ/պիտի/՝) մոռանանք»-«(կ/պիտի/պետք է) մոռացվենք», **իշեսցիք**-ը «(կ/պիտի/՝) հիշենք»-«(կ/պիտի/՝) հիշվենք»: Մասնակի կրկնասեռ բայերից այս դեպքում ևս առանձնանում են **ա** խոնարհման ածանցավոր ներգործական բայերը, որոնք կրկնասեռ են նաև նշված ժամանակաձևի մյուս բոլոր դիմաթվային ձևերում:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ չունենալով ոչ չեզոք, ոչ ներգործական և ոչ էլ կրավորական սեռերի քերականական իմաստների արտահայտության առանձին միջոցներ գրաբարի բայը սեռի քերականական իմաստների արտահայտության պլանում ներկայացնում է մի անմիօրինակ պատկեր: Սրան նպաստում է այն, որ գրաբարի բայն ունի երեք սեռ, բայց խոնարհվում է մեկ կամ երկու ձևով, ուստի միշտ չէ, որ տեղի է ունենում սեռի քերականական իմաստի և վերջինիս արտահայտության միջոցների համապատասխանություն: Սեռի քերականական իմաստի և վերջինիս արտահայտության միջոցների համապատասխանության տեսակետից աչքի են ընկնում միայն **ե** խոնարհման պարզ ու ածանցավոր բայերը, սակայն սրանք նույնպես որոշ դիմավոր և բոլոր անդեմ ձևերում հանդես են բերում կրկնասեռություն: Այնպես որ, գրաբարում չկա ներգործական սեռի որևէ բայ, որն այս կամ այն կերպ կրկնասեռ չլինի: Հատկանշական է, որ կրկնասեռության քերականական դրսևորումներն ալվելի անմիօրինակ են բայի 1-ին հիմքից կազմված ձևերում¹¹:

Պատկերը բոլորովին այլ է 2-րդ հիմքից կազմված ժամանակաձևերում, որոնք աչքի են ընկնում ներգործականության ու կրավորականության նշանակություն արտահայտելու միօրինակությամբ: Բայի 2-րդ հիմքից կազմված համադրական ժամանակաձևերում ներգործածև ու կրավորածև խոնարհումների միջոցով, համապատասխանաբար, ներգործական ու կրավորական սեռերի քերականական իմաստներ արտահայտելու հնարավորությամբ օժտված են միայն **ե** խոնարհման պարզ և ածանցավոր, ինչպես նաև **ա** և **ու** խոնարհման պարզ բայերը: Նշված դեպքից բացի գրաբարյան ներգործական սեռի բոլոր բայերը (**ի** խոնարհման պարզ և ածանցավոր, **ա** և **ու** խոնարհման ածանցա-

վոր) 2-րդ հիմքից կազմված համադրական ժամանակաձևերում (անցյալ կատարյալ, երկրորդ ապառնի, բուն հրամայական և հորդորական հրամայական) զուրկ են առանձին բառահարաբերական ձևությունների միջոցով ներգործական և կրավորական սեռերի քերականական իմաստներ արտահայտելու հնարավորությունից: Ունենալով խոնարհման մեկ ձև, սակայն քերականական երկու սեռերի նշանակություն արտահայտելու ներուճակություն՝ այդ քայերը հանդես են բերում կրկնասեռություն՝ կարողանալով արտահայտել ներգործական, հարկ եղած դեպքում նաև՝ կրավորական սեռի քերականական իմաստ:

Ստորև ներկայացնում ենք քայական 2-րդ հիմքից կազմված համադրական ժամանակաձևերի՝ անցյալ կատարյալի, երկրորդ ապառնիի և բուն հրամայականի, այսպես կոչված, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների աղյուսակը (որտեղ մասնակի բացառությունները հաշվի չեն առնվել):¹⁰

Ներգործաձև խոնարհում	Կրավորաձև խոնարհում
1. Ե խոնարհման պարզ քայեր 2. Ե խոնարհման ածանցավոր քայեր 3. Վ խոնարհման պարզ քայեր 4. Ու խոնարհման պարզ քայեր	1. Ի խոնարհման պարզ քայեր 2. Ի խոնարհման ածանցավոր քայեր 3. Վ խոնարհման ածանցավոր քայեր 4. Ու խոնարհման ածանցավոր քայեր 5. Ե խոնարհման պարզ քայեր 6. Ե խոնարհման ածանցավոր քայեր 7. Վ խոնարհման պարզ քայեր 8. Ու խոնարհման պարզ քայեր

Գրաբարում կան լրիվ և մասնակի կրկնասեռ քայեր: Թե՛ լրիվ և թե՛ մասնակի կրկնասեռությունն անմիջականորեն պայմանավորված է գրաբարի քայերի կազմության առանձնահատկություններով: Լրիվ կրկնասեռ քայերի թիվն, ըստ մեր հաշվումների, հարյուրից չի անցնում: Դրանք միայն **ի** խոնարհման պարզ ու ածանցավոր և **ու** խոնարհման ածանցավոր ներգործական սեռի քայերն են, որոնք, այդպիսին լինելով, բոլոր դիմավոր ու անդեմ ձևերում ունեն արտահայտության մեկ տարբերակ:

Գրաբարի ներգործական սեռի մյուս բոլոր քայերը հանդես են բերում մասնակի կրկնասեռություն, որը ներկայացնում է բավականին անմիօրինակ պատկեր:

Գրաբարում կրկնասեռությունը հատուկ է ներգործական սեռի քայերի և դիմավոր, և անդեմ քայաձևերին¹¹: Ընդ որում հարկ է նշել, որ գրաբարում կրկնասեռ են ներգործական սեռի բոլոր անդեմ քայերը, քանի որ կրավորական իմաստ արտահայտելու տեսանկյունից նշույթավորված չեն, զուրկ են կրավորական ցուցիչից ի տարբերություն աշխարհաբարի, որտեղ կրավորա-

կան ածանց կարող են ստանալ նաև ներգործական սեռի բոլոր անդեմ բայերը՝ դրանով իսկ գիտակցվելով որպես առանձին բառային միավորներ²⁰:

Ինչ վերաբերում է գրաբարի բայի 14 համադրական ու վերլուծական դիմավոր ձևերին, ապա սրանցից 8-ը չունի ներգործական և կրավորական սեռերի քերականական իմաստների արտահայտության առանձին միջոցներ, ուստի ներգործական սեռի բոլոր բայերն այդ ժամանակաձևերում կրկնասեռ են: Այդ ժամանակաձևերն են անկատար անցյալ, հորդորական հրամայական, վաղակատար-հարակատար ներկա, վաղակատար-հարակատար անցյալ, վաղակատար-հարակատար ապառնի, ապակատար ներկա, ապակատար անցյալ, ապակատար ապառնի:

Ներգործական և կրավորական սեռի քերականական իմաստների արտահայտման առանձին միջոցները բացակայում են նաև անցյալ կատարյալի հոգնակի թվի առաջին և երկրորդ ապառնիի հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքի ձևերում, ուստի ներգործական սեռի բոլոր բայերն այդ դեմքի ձևերում ևս հանդես են բերում կրկնասեռություն:

Մնացած ժամանակաձևերը (անկատար ներկա, առաջին ապառնի, բուն հրամայական և արգելական հրամայական) ներգործական և կրավորական սեռերի քերականական իմաստների արտահայտման տարբեր միջոցներից զուրկ են ոչ թե առանձին դիմաթվային ձևերում, այլ ըստ այն բանի, թե կազմության ինչ առանձնահատկություն ունի ներգործական սեռի այս կամ այն բայը:

Ստացվում է այնպես, որ գրաբարում ավելի բնական է ներգործական բայերի կրկնասեռությունը, քան թե այն, երբ ներգործական բայն ունի թե ներգործական և թե կրավորական իմաստների արտահայտության առանձին միջոցներ: Ասվածի մասին վկայում է այն հանգամանքը, որ գրաբարի ներգործական սեռի մի շարք բայերի դիմավոր ու անդեմ ձևերը, իսկ մյուս բայերի էլ բոլոր անդեմ ձևերն ու դիմավորների գերակշիռ մասը կրկնասեռ են և միայն սակավաթիվ դեպքեր կան, երբ ներգործական սեռի բայերի առանձին դիմավոր ձևերը կրկնասեռ չեն:

Ստորև ներկայացնում ենք գրաբարի ներգործական սեռի պարզ և ածանցավոր բայերի աղյուսակն ըստ նրանց դիմավոր ու անդեմ ձևերում լրիվ կամ մասնակի կրկնասեռ լինելու (տրվում են, համապատասխանաբար, + և -) (նշաններով) կամ ընդհանրապես կրկնասեռ չլինելու (տրվում է - նշանով) հատկանիշների:

Բայանդեղը	Ամբ. մեղք	Ամբ. անց ալ	Ի ին ապառնի	Արգել հրամ	Ամբ. կատար	2 րդ ապառնի	Բանդ հրամ	Գործող հրամ	Վաղ - հարմարագործ երկր	Վաղ - հարմար ա մեց	Վաղ - հարմար ա մեց	Ապառնա տ ներ ա	Ապառնա տ ներ ա	Ապառնա տ ներ ա	Ապառնա տ ներ ա	Ապառնա տ ներ ա	Ապառնա տ ներ ա	Ապառնա տ ներ ա	Ապառնա տ ներ ա
Ե խոն պարզ	-	+	-	-	-	-	-	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Ե խոն ած.	-	+	-	-	-	-	-	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Ա խոն պարզ	+	+	-	+	-	-	-	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Ա խոն ած.	+	+	-	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՈՒ խոն պարզ	+	+	+	+	-	-	-	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
ՈՒ խոն ած.	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Բ խոն պարզ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Բ խոն ած.	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+

Ծանոթագրություններ

1. Ստովածաշնչյան մեքերերումների հղումները տալիս ենք ընդունված համառոտագրություններով: Լեզվական նյութը քաղել ենք Սուրբ գրքի վեներտիկյան 1960 թ. հրատարակությունից:
2. Ա. Մեյեն այս փաստն արձանագրում է ա լ ու խոնարհման պարզ, ինչպես նաև **ա-նալ, նուլ** (այսինքն՝ **ա** խոնարհման -**ա**ն-սոսկածանցավոր **և ու** խոնարհման -**ն**-սոսկածանցավոր) բայերի մասին: Սակայն նա ուշադրություն չի դարձնում այդ բայերի սեռի քերական կարգի արտահայտությանը (նրա համար ելակետ են ծառայում այդ բայերի կազմությունն ու խոնարհման պատկանելությունը): Այդ է պատճառը, որ այսպես կոչված հասարակ բայերի շարքում տեղ է տալիս ոչ միայն ներգործական, այլև չեզոք սեռի բայերի, ինչպես **թառնալ, լնուլ, ընթեռնուլ, զգե-նուլ, իմանալ, մերկանալ, մոռանալ** և այլն, այլև **բանալ, փութալ, մերծենալ, զօրհանալ** և այլն (տես **Ա. Մեյե**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 363-364):
- Մոծե հիշատակել, որ այս աշխատության մեջ Ա. Մեյեն մի շարք նուրբ դիտարկումներ ունի **ծանաչել, յառնել, ուտել, լսել, ունիմ (կալալ)** անկանոն բայերի կրավորածն և ներգործածն խոնարհումների վերաբերյալ:
3. Տես **Վ.Դ. Առաքելյան**, Բայասեները գրաբարի տարբեր խոնարհումների առնչությամբ, Պատմա-քանասիրական հանդես, 1968, թիվ 1, էջ 77-78: **Ա.Ա. Արքաիս-մյան**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1978, էջ 96-97: **Պ.Ե. Շարաբխանյան**, Գրաբարի դասընթաց, Երևան, 1974, էջ 193-195: **Յ.Ս. Ավետիսյան**, **Ռ.Ս. Ղազարյան**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 16, 28-30: **Ա. Մեյե**, նշվ. աշխ., էջ 359-366 և այլու:

4. Տե՛ս **Վ.Գ. Սոաքեյան**, նշվ. աշխ., էջ 77:
5. Տե՛ս **Վ.Գ. Սոաքեյան**, նշվ. աշխ.:
6. Բացառություն են վերլուծական կազմությամբ կրավորական սեռի որոշ բայեր, որոնք ձևավորվում են *լինիմ*, *անկանիմ* և այլ բայերի հարադրումով այսպիսով հավորվելով կազմությամբ վերլուծական ներգործական բայերին: Դժմտ. *հալածական առնել* և *հալածական լինիմ*, *ի բուռն արկանել* և *ի բուռն անկանիմ*, *պաշտոն հարկանել* և *պաշտոն առնուլ* և այլն:
7. Նկատելի է, որ, *ի ծնությունից* գրգռեցեալ կրավորական խոնարհման համակարգում ակտիվ է նաև *ա* ձևությո՜ք (հմտտ. -*աք*, -*այց*, -*այք*, -*արաք*):
8. Պատահական չէ, երբ Ա. Սյուրնյանն առաջարկում է այս կարգի բայերը քննել պակասավորների շարքում: «Պակասաւորներու կարգը կրնան դուրիլ,- գրում է նա,- գրաբարի մէջ *հասարակ բայ* ըստածները, որոնք միայն կրաւորական ձեւով թէ կրաւորականի եւ թէ ներգործականի տեղ կանցնին» (տես **Ա. Սյուրնեան**, Բնական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 463):
9. Կրկնասեռ են նաև *լսել*, *ծանաչել*, *ունիմ*, *ուտել* բայերի 2-րդ հիմքերից (համապատասխանաբար՝ *լու*, *ծանի*, *կալ*, *կեր*) կազմվող ժամանակածները:
10. Բացառություն են ու խոնարհման *առնուլ*, *ընկենուլ*, *լնուլ*, *խնուլ* բայերը, որոնք 2-րդ հիմքից կազմվող անցյալ կատարյալում, երկրորդ ապառնիում և թուն հրամայականում խոնարհվում են ներգործական, և կրավորական արտահայտելով, համապատասխանաբար, ներգործական և կրավորական իմաստ (տես **Ա.Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 138):
11. Սասնակի կրկնասեռություն են ցուցաբերում ոչ միայն կանոնավոր, այլև անկանոն և պակասավոր մի քանի բայեր (**գո՛գ**, *լսել*, *ծանաչել*, *պարտիմ*, *ուտել*):
12. Արգելական հրամայականն առանձին ժամանակածն ենք համարում պայմանականորեն: Իրականում այն թուն հրամայականի ժխտական տարբերակն է:
13. Բացառություն է անկատար անցյալի եզակի թվի 3-րդ դիմային ձևը. այն ունի և ներգործական և կրավորական իմաստների արտահայտության առանձին միջոցներ, ինչպես *կոչէր* («կոչում եմ/կանչում էր») և *կոչիւր* («կոչվում եմ/կանչվում էր»), որոնցից առաջինն ունի նաև կրավորական իմաստ արտահայտելու հնարավորություն, իսկ վերջինը գրաբարում արդեն անհետացող լեզվական իրողություն է, որի տեղը հենց 5-րդ դարում գրավում է ներգործական իմաստ արտահայտող ձևությո՜ք (*յր*): Սյնպես որ *կոչէր* բայածը գրաբարում միաժամանակ նշանակում է նաև «կոչվում էր, կանչվում էր»:
14. Անցյալ դերբայը գրաբարում հանդես է բերում նույն գործառույթը, ինչ հարակատարը արդի հայերենում:
15. Ի տարբերություն «*ես իիշեալ եմ*» տիպի կառույցների, որոնք կարող են նշանակել և «ես իիշել եմ», և «ես իիշվել եմ/իշված եմ», գրաբարում անցյալ դերբայով և *եմ* բայի միադիմի կիրառությամբ ձևավորված կառույցներն ունեն միայն ներգործական նշանակություն: Օրինակ՝ «*Յիշեալ է իմ*» նշանակում է միայն «ես իիշել եմ»: Նկատենք, որ գրաբարում ընդունված չէ ապակատար ներկա, անցյալ և ապառնի բաղադրյալ ժամանակածների՝ կրավորական նշանակությամբ կիրառությունը: Դարկ եղած դեպքում այդ նշանակությունն արտահայտվում է առաջին կամ երկրորդ ապառնի ժամանակածի միջոցով:
16. Բացառություն են *ա* խոնարհման *բանալ*, *բառնալ*, *թանալ*, *լուանալ*, *մերկանալ* բայերը, որոնք 2-րդ հիմքից կազմվող անցյալ կատարյալում, երկրորդ ապառնիում և թուն հրամայականում խոնարհվում են և ներգործական, և կրավորական արտահայտելով, համապատասխանաբար, ներգործական և կրավորական իմաստներ (տես **Ա.Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 137): Նշված բայերից *բառնալ* բայը ներգործա-

կան իմաստ է արտահայտում մահ կրավորաձև խոնարհմամբ (Նախ Քրիստոսի **բարձան** զխաչն – տես Նոր քառգիրք հայկազնան լեզուի. հ. 1, էջ 440. ԲԱՌՆԱԼ քառահոգվածում): Այս բայերը նույն բնույթը ցուցաբերում են մահ երկրորդ ապառնիում:

17. Տես **Ա. Մեյե**, նշվ. աշխ., էջ 360:
18. Այս մասին ավելի մանրամասն տես **Ա.Ա. Արախամյան**, նշվ. աշխ., էջ 136-138:
19. Ուշ շրջանի գործերում *ի* խոնարհիչ ծայնավորով կրավորական իմաստ կարող է արտահայտել մահ անողոշ դերբայը, ինչպես ... և խնդրել **մկրտիչ** ըստ մոցա կարգացն (Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 150): Այս մասին տես **Ա.Ա. Արախամյան**, նշվ. աշխ., էջ 130, **Ա. Մեյե**, նշվ. աշխ., էջ 360:
20. Ըստ մեր դիտարկման բացառություն է կազմում արդի հայերենի **պարտվել** կրավորական բայը, որը չունի ներգործական ելակետ:

Г. ХАЧАТРЯН

ДВУЗАЛОГОВЫЕ ГЛАГОЛЫ В ГРАБАРЕ

Имел 3 формы выражения грамматической категории залога и 2 формы спряжения, глагол грабара, с точки зрения выражения грамматических значений залога, специфичен. Исследование показывает, что в грабаре глаголы действительного залога, как правило, являются двузаловыми, т.е. имеют параллели, отдельные средства выражения как действительности, так и страдательности. Есть только отдельные исключения.

G. KHACHATRYAN

BIVOCATIVE VERBS IN GRABAR

The verb in Grabar presents an original system with 3 forms of the grammatical category of voice and 2 forms of declension. The study reveals that double vocation is regular for Grabarian active verbs, i.e. they have parallel uses in both active and passive forms. There are only a few exceptional cases when double vocation is not possible.